

մացութեան արդիւնք կը թուի: Չի արդարեւ Եշքոյրգիոնն ալ ունի երկու համառօտ աղօթքներ, բայց պղծեալ անօթոց եւ արմտեաց համար է (Գոյ. 482): Ասոր փոխարէն տեսանք վերեւ (471) կիր. Եզընկացւոյն կախարդախառն մէկ արարողութիւնը նոյնպիսի անօթոց վրայ:

Սակայն նոր Հայաստանը կամ կիլիկիայն՝ ինչպէս բարեփոխեց պղծութեան գաղափարը, գտաւ կամ առաւ Յոյներէն նաեւ պղծելոց սրբութեան պաշտօն մը, որուն կը հանդիպինք Վենետկոյ 1345ի մաշտոցին մէջ, զբուած ի Սիս, եւ որ սահմանուած է սրբելու այն ձէթը կամ գինին՝ որոյ մէջ կենդանի մը կ'ընկնի ու կը խեղդուի, բայց դեռ չէ նեխած կամ երկար մնացած: Կ'առնուն, կ'ըսէ, մեռեալը եւ կը նետեն. կը լուան ուրիշ աման մը, եւ քահանայն խնկելով՝ կ'առնու եւ անոր մէջ կը դնէ Սբ. Յայտնութեան ջրէն՝ խաչանիշ ձեւով. ապա հոն կը լեցնէ պղծուած գինին կամ ձէթը, երկու մոմ կը վառեն անօթին քով, եւ կը սկսին պաշտել Ծ սաղմոսն ու քարոզ մը. յետոյ քահանայն կը մատուցանէ յատուկ աղօթք մը՝ որով կը խնդրէ օրհնել ու սրբել իւրը կամ գինին: Ապա կը ձգէ անոր մէջ Յայտնութեան ջրէն՝ ըսելով. « Աւրհնեսցի եւ